ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 20/4

3 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Այաս Պրինտ» ՍՊԸ 25.08.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի տեղակալի 08.05.2014 թ-ի թիվ 0004 որոշման դեմ:

«Այաս պրինտ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի տեղակալի 8 մայիսի 2014 թ-ի թիվ 0004 որոշման (մաքսային վճարների գանձման վերաբերյալ) համաձայն «Այաս Պրինտ» ՍՊԸ կողմից թիվ թիվ C 842 ԲՄՀ-ով «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հայտարարագրված սարքավորումների համար մինչև 17.01.2012 թ-ին ենթակա է վճարման ՀՀ պետական բյուջե 4.584.100 դրամ ԱԱՀ:

«Այաս Պրինտ» ՍՊԸ-ն 2011 թ-ի հունվարի 17-ի թիվ C 842 ԲՄՀ-ով «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հայտարարագրել է սարքավորումներ, որոնց ԱԱՀ-ի վճարումը հետաձգվել է մինչև 17.01.2012 թ-ը:

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդված 3-րդ կետի (2011 թ-ի դրությամբ գործող խմբագրությամբ). «եթե մինչև սույն հոդվածի առաջին մասով սահմանված համապատասխան ժամկետի ավարտը նույն ժամանակաշրջանի ընթացքում առաջացած հարկ վճարողի պետական բյուջեի հանդեպ ԱԱՀ-ի վճարման պարտավորության մարված գումարը գերազանցում է ներմուծված ապրանքների համար ԱԱՀ–ի հետաձգված պարտավորությունների գումարը, ապա այդ ժամկետի ավարտից հետո հարկ վճարողի մաքսային մարմինների հաշվարկած ԱԱՀ-ի հետաձգված գումարների մասով ԱԱՀ վճարելու պարտավորությունը դադարում է:

Տվյալ դեպքում 2011 թ-ի հունվարից մինչև 2012 թ-ի հունվար ամիսն ընկերությունը պետական բյուջեի հանդեպ ԱԱՀ-ի վճարման պարտավորության մարած գումարը կազմում է 2011 թ-ի 4-րդ եռամսյակ 19.078.776 դրամ, 2012 թ-ի հունվար՝ 11.194.920 դրամ, որը գերազանցում է 17.01.2011 թ-ի C 842 ԲՄՀ-ով ներմուծված և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածի 3-րդ կետով հետաձգված 4.584.000 (2.320.000+2.264.000) դրամը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև 2012 թ-ի հունվարի 1-ը ներմուծված ապրանքների մասով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածի 2012 թ-ի հունվարի 1-ից գործող խմբագրությունը կիրառելի չէ, ուստի հետաձգված գումարների մասով ԱԱՀ վճարման պարտավորությունը դադարում է:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրում է հիմք ընդունելով 2011 թ-ին գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածի դրույթները չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ԱՏՄ պետի տեղակալի 2014 թ-ի մայիսի 8-ի թիվ 0004 որոշումը և հանել գույքի վրա դրված արգելանքը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Այաս Պրինտ» ՍՊԸ կողմից 2011 թ-ի հունվարի 17-ի թիվ C 842 ԲՄՀ-ով «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հայտարարագրվել է սարքավորումներ, որոնց ԱԱՀ-ի վճարումը հետաձգվել է մինչև 17.01.2012 թ-ը:

Նշվեց նաև, որ 2011 թ-ի հունվարից մինչև 2012 թ-ի հունվար ամիսն ընկերությունը պետական բյուջեի հանդեպ ԱԱՀ-ի վճարման պարտավորության մարած գումարը կազմում է 2011 թ-ի 4-րդ եռամսյակում 19.078.776 դրամ, 2012 թ-ի հունվարին՝ 11.194.920 դրամ, որը գերազանցում է 17.01.2011 թ-ի C 842 ԲՄՀ-ով ներմուծված և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածի 3-րդ կետով հետաձգված 4.584.000 դրամը:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետաձգման ժամանակաշրջանում ներառված հաշվետու ժամանակաշրջանների արդյունքով ընկերության կողմից պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները գերազանցել են ԱԱՀ-ի հետաձգված պարտավորության գումարին, ինչպես նաև այն, որ տվյալ ժամանակաշրջանում ընկերությունը ունեցել է նաև պետական բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներ, հետևապես «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 3-րդ մասի՝ մինչև 01.01.2012 թ-ը գործող խմբագրության համաձայն, հետաձգման ժամկետի ավարտից հետո ընկերության կողմից մաքսային մարմինների հաշվարկած ԱԱՀ-ի հետաձգված գումարների մասով ԱԱՀ վճարելու պարտավորությունը դադարում է:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Այաս Պրինտ» ՍՊԸ 25.08.2014 թ-ի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի տեղակալի 08.05.2014 թ-ի թիվ 0004 որոշմը:

Հանձնաժողովի նախագահ՝ **Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**